դարէ և զՍէյտի Ահմէտն սիրով խաղաղեցնէ և զվարի ամբոխն և զզօրն ցրուէ. քանզի քար ի վերայ քարի չթողաւ, ոչ զեղ և ոչ չէն և ոչ զասապա չի թողին թէ չիջան ի կեր և ըստակ չի (պող ը կրոշ) . . . ա-ճէ կապեալ և կու ժողովէ. և ասացին թէ եկեալ ի Քոթահիա ԺԲՒ կեր է կախեր (?), կամի ի Պուռսա գալ։ Օրս թագաւորն մի խէթիչէրիվ յղեալ յօճախն էնկիչերուն մեծամեծացն, և նոքա մարդ՝ յամենայն զուլլուխ և չաւուշաց և չօրպաճոց թէ Ձեր զլուխն թէ ձեզ պիտի և ձեր տեղն և ձեր հացն, նա՛ ով ոք որ էնկիչէրի թէ ինչ և իցէ՝ ի ճանապարհին ի մարդ մօտի կամ սուր ունենայ ի ձեռն կամ թէ կանչելով երթայ և հաչարութիւն անէ, բռնէք դուք և ծեծէք և մեզ ի դուռ աղային բերէք։

Երեկոյիս ի ժամ գնացի և անտի՝ ի տուն Մղտեսուն, զհացն ի հոն կերայ և ելեալ գնացի ի տուն։

Առաւօտուս Եշի (17 Ապրէլ) ի Սուրբ Նիկողոս գնացի և անտի ի տուն. և անտի ելեալ ի խանութ գնացի։ Եւ երեկոյիս ի տուն գնալն մէկ աղաղակ բարձաւ ի չարսուն, եւ զխանութի էսպապն կրէին փոյթ ընդ փոյթ, եւ իմ տեղեկացեալ ասացին թէ Ի Պալթաճի օտալարն մի օճախ է բռընկեր. ի վերայ հասեալ հազիւ մարեցին. և գնացի ի տուն՝ զառած գինին պարպեցի։

Առաւօտուս Չշի (18 Ապրէլ) ի ժամ գնացի և անտի ելեալ ի տուն, և անտի՝ ի խանութ։ Առաւօտուս Մարտիրոս վարդապետն սիւնհոդոս առնել ետուր Չ եկեղեցոյ իշխանացն եւ դատաստան եղեւ եւ ծաղկաբար Մարկոսն եւ Աստուածածնայ Տէր Ղազարն սապիթ արարին, և Մարկոսն ասաց թէ Ես ի հետ էի որ Մուղնեցին հրամայեց մեզ, ես եւ իւր Յովսէփն, որ էր ժամասաց կաթողիկոսին Փիլիպպոսի եւ ի ժամանակիս ընդ նորա էր, գնացաք ընդ կախարդն և խոս-